

ԴԵՄԻՐ
ՍՅՈՆՄԵԶ

DEMIR
SÖNMEZ

ՎԻՐԱՎՈՐ
ԱՐԾԻՎԸ

Լեռնային Ղարաբաղի
(Արցախի) պատերազմը

Արցախի
շրջափակումը և
միջազգային
բռնազավթումը

L'AIGLON
BLESSÉ

La guerre au Haut-Krabadh
(Artsakh)

Blocus et
occupation
internationale
d'Artsakh



ԵՐԵՎԱՆ
2025

Այս գիրքը նվիրում եմ Արցախի
պաշտպանության համար
իրենց կյանքը կորցրածներին
և իմ սիրելի ընկեր Րաֆֆի
Հերմոն Արաքսին, ով մահացել
է 10.08.2021 թ.:

Je dédie ce livre à ceux qui
ont perdu la vie pour la
défense de l'Artsakh et à mon
cher ami Raffi Hermon Araks,
décédé le 10 août 2021

ՀՏԴ 94(479.25)(084)
ԳՄԴ 63.3(5Հ)Գ6
Ս 633

Սյոնմեզ Դեմիր
Ս 633 Վիրավոր արծիվը. Լեռնային Ղարաբաղի (Արցախի) պատերազմը / Դ. Սյոնմեզ. -
Եր.: Newmag, 2025. - 224 էջ:

«Վիրավոր արծիվը. Լեռնային Ղարաբաղի (Արցախի) պատերազմը» երկլեզու (հայերեն, ֆրանսերեն) գրքում լուսանկարիչ և լրագրող Դեմիր Սյոնմեզը վավերագրել է Արցախի անկումը (2020-2023): Նա յուրովի է փոխանցում պատերազմի ողբերգական իրականությունը, մարդկանց պատմությունները և նրանց ոգին: Լուսանկարներն ուղեկցվում են գրավոր նոթերով, որոնք ընթերցողին տեղափոխում են մարտի դաշտ, Ստեփանակերտի, Մարտունիի, Ծուլիի, Մարտակերտի փողոցներ և ընկղմում պատերազմի մառախուղով պատված իրականություն: Այս գիրքը փաստագրական արժեք ունի, հիշողության վկայություն է, հարգանքի տուրք՝ զոհվածներին և սթափության կոչ՝ համայն մարդկությանը:

ՀՏԴ 94(479.25)(084)
ԳՄԴ 63.3(5Հ)Գ6

Sönmez Demir
L'Aiglon blessé. Guerre du Haut-Karabakh (Artsakh)
D.Sönmez : Newmag, 2025. - 224 pages.

“L'Aiglon blessé. La guerre du Haut-Karabakh (Artsakh)” bilingue (arménien-français)
Dans le livre, le photographe et journaliste Demir Sönmez a documenté la chute de l'Artsakh (2020-2023). Transmet la réalité tragique de la guerre, les histoires des gens d'une manière unique et leur esprit. Les photographies sont accompagnées de notes écrites qui transportent le lecteur sur le champ de bataille, les rues de Stepanakert, Chouchi, Martouni, Martakert et noyées dans le brouillard de la guerre réalité. Ce livre a une valeur documentaire, c'est un témoignage de mémoire, de respect, un hommage aux morts et un appel à la sobriété à toute l'humanité.

ISBN 978-9939-967-75-2
Հրատարակության և պատրաստել Editions Association Photography Geneva-ն:
Préparé pour publication par les Editions Association Photographie Genève.
+ 41 79 256 30 11 / info@photographygeneva.com / photographiegeneva.com

Դեմիր Սյոնմեզ «Վիրավոր արծիվը» © 2025, «ՆյուՄեգ» ՍՊԸ
Գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքը ձեռք է բերվել հեղինակի հետ կնքած պայմանագրով:
Demir Sönmez « L'Aiglon Blessé » © 2025, « New Mag » LLC
Les droits de traduction et de publication du livre en arménien appartiennent à « New Mag » LLC.
Le droit a été acquis par un contrat avec l'auteur.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

M.G.

ԱՐՑԱԽԻ ՀԱՐՑԸ

Լեռնային Ղարաբաղի տարածքը գտնվում է Հարավային Կովկասում՝ Ադրբեջանի և Հայաստանի միջև: Այն Խորհրդային Միության անդամ է եղել 1920–1991 թվականներին:

Վերջերս Ադրբեջանի հարձակման հետևանքով Ղարաբաղը հայտնվեց պատերազմի թատերաբեմում, այն էլ՝ մահացու: Պատերազմը սկսվել է սեպտեմբերի 27-ին և ավարտվել հրադադարով, որը ստորագրվել է Հայաստանի և Ադրբեջանի միջև (Ռուսաստանի հովանու ներքո) պատերազմից 44 օր հետո՝ 2020 թվականի նոյեմբերի 9-ին:

Ղարաբաղին բնորոշ մշտական քաղաքական խնդիրը ակնհայտ հակասությունն է. հայերով բնակեցված Ղարաբաղը (որը ժամանակին Հայաստանի կազմում է եղել) 1920-ականներին կամայականորեն միացվել է Ադրբեջանին:

Այսպիսով, Մոսկվայի կոմունիստական գլխավոր իշխանությունն ինչպես Կովկասում, այնպես էլ Խորհրդային Միության մյուս երկրներում ազգային ինքնությունների համահարթեցման հարց էր առաջադրում: Անհրաժեշտ էր կոմունիստական գաղափարախոսության անունից քաղաքացու նոր տիպ կերտել՝ հասարակությանը մշտապես փոխելու համար: Ավելի ստույգ՝ Արցախյան հարցի սկզբնաղբյուրում գաղափարախոսության խեղաթյուրումն է ընկած:

INTRODUCTION

M.G.

LA QUESTION DE L'ARTSAKH

Le Karabagh est un territoire situé au Caucase du sud, entre l'Azerbaïdjan et l'Arménie. Il a été partie intégrante de l'Union soviétique de 1920 à 1991.

Dernièrement, agressé par l'Azerbaïdjan, le Karabagh a été le théâtre d'une guerre particulièrement meurtrière. Elle a débuté le 27 septembre et s'est soldée par un armistice précaire, signé 44 jours plus tard, le 9 novembre 2020, entre l'Arménie et l'Azerbaïdjan, sous l'égide de la Russie.

Le problème politique permanent qui caractérise le Karabagh repose sur une contradiction flagrante. Presque exclusivement peuplé d'Arméniens, il a en effet, dans les années 1920, été arbitrairement rattaché à l'Azerbaïdjan après avoir un temps été destiné à l'Arménie.

Il s'agissait alors pour le pouvoir central communiste de Moscou, au Caucase comme partout ailleurs en URSS, de niveler les identités sociales. Il fallait créer un nouveau type de citoyen, au nom de l'idéologie communiste, pour changer durablement la société. Et précisément, l'arbitraire, aberration idéologique est à l'origine même de la question de l'Artsakh.

ԵՐԲ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

ԶԱՌԱՆՑՈՒՄ Է

Հեղափոխության այս գեղեցիկ նպատակին հասնելու համար ամենալավ տարբերակներից մեկը տարածքների կամայական և շարունակական մասնատումն էր, բացի դա՝ նաև ստիպում էին, որ զարգացման պատրվակով ժողովուրդները կորցնեն իրենց պատմական հիշողությունն ու հետքերը: Ամբողջ Կովկասը, սովետական իշխանության տիրապետության տակ լինելով, 70 տարի շարունակ ապրել է մշակութային այս հարկադրանքի ներքո:

Միջազգային իրավունքի երկու անհաշտ սկզբունքներ այսօր իրարամերժ են՝ Ղարաբաղում. մի կողմից՝ սահմանների անձեռնմխելիությունը, մյուս կողմից՝ ժողովուրդների ինքնորոշման իրավունքը: Սակայն քաղաքական իրողության հիմքը 1915 թվականի ցեղասպանության շարունակությունն է:

Համենայնդեպս, 1991 թվականին ոչ մի դժվարության առջև կանգ չառած և հանրաքվեի արդյունքում ստեղծված Արցախի հնքնավար Հանրապետությունը դարձավ ժողովրդավարական պետություն՝ ունենալով խորհրդարան և համամասնական ընտրական իրավունքով ընտրված նախագահ:

Տարօրինակ փաստ է, բայց ժողովրդավարական այս գործընթացը ՄԱԿ-ի կողմից չի ճանաչվում (1945 թվականին Սան Ֆրանցիսկոյում հիմնադրված ՄԱԿ-ն ուներ 50 անդամ երկիր, նրանց թիվը գրեթե չորս անգամ ավելացել է): Դժվար է հավատալ, որ, խիստ հարգելով տարածքների անձեռնմխելիությունը, ՄԱԿ-ն այսօր 50-ի փոխարեն ունի 193 անդամ երկիր:

2020 թվականի սեպտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 9-ը տևած ադրբեջանական զինված հարձակումն ավերիչ եղավ: Պետք է նշել, որ մինչ այդ Արցախն ուներ մոտավորապես 4500 քառակուսի կիլոմետր տարածք, իսկ բնակչությունը կազմում էր 150,000 մարդ:

Այսօրնրա տարածքների գրեթե երկու երրորդը Ադրբեջանի վերահսկողության տակ է, և նույնիսկ Հայաստանի սահմանների ամբողջականությունն է հարցականի տակ դրված:

Խորհրդային ժամանակների սահմաններն են չափանիշ դառնում: Կարևոր փաստ է, որ երկրում ռազմական դրությունը փոխվեց, երբ 2020 թվականի նոյեմբերի 11-ից ռուսական զորքը միջանկյալ դիրքերում տեղակայվեց:

Ռուսական կայսրությունը, որը, 19-րդ դարից սկսած, Կովկասում իր ճանապարհն էր հարթում դեպի Հնդկական օվկիանոս և Միջերկրական ծով, այս ճանապարհով գուցե առիթ էր փնտրում՝ մաքրելու ԽՍՀՄ-ի անկման նվաստացումը, ինչն արտահայտվելու էր իշխանության վերադարձով:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁ

Արցախը զուտ հայկական անուն է: Երկրամասի ամենահին «Արցախ» տեղանվան հստակ ստուգաբանություն հայտնի չէ, բայց կարող ենք ասել, որ Ար-ով սկսվող յուրաքանչյուր բառ ու բան ի սկզբանե հայկական է եղել: Արցախը գտնվել է

QUAND LA RÉVOLUTION DÉLIRE

Pour atteindre ce bel objectif révolutionnaire, rien de mieux que de multiplier les découpages hasardeux de frontières, un moyen, parmi d'autres, de faire perdre aux peuples, sous prétexte d'évolution, mémoire et repères. L'ensemble du Caucase, sous domination soviétique, a vécu sous ce diktat culturel pendant donc quelque 70 ans.

Aujourd'hui, au Karabagh, se disputent deux principes de droit international irréconciliables, l'intangibilité des frontières d'une part, et le droit des peuples à l'autodétermination de l'autre. Mais la réalité politique profonde est, elle, fondée sur la poursuite du génocide de 1915.

Pourtant, depuis 1991, contre vents et marées, la République d'Artsakh, née d'un référendum populaire d'autodétermination, s'est constituée en État démocratique, avec un parlement et un président élu au suffrage universel.

Fait étrange, ce processus démocratique n'est pourtant pas reconnu par l'organisation des Nations-Unies qui, de quelque 50 membres à sa fondation en 1945 à San Francisco, en compte aujourd'hui presque quatre fois plus. On a peine à croire que l'ONU soit passée de 50 à 193 membres dans le strict respect de l'intangibilité des frontières.

Avant l'agression armée azérie qui a fait rage, donc, du 27 septembre au 9 novembre 2020, l'Artsakh proprement dit s'étendait sur une surface d'environ 4500 kilomètres carrés et comptait une population de quelque 150 000 citoyens.

Aujourd'hui, presque deux tiers de son territoire sont passés sous le contrôle de l'Azerbaïdjan, et même l'ensemble des frontières avec l'Arménie est remis en cause, les frontières du temps soviétique devenant la référence. Fait majeur, la donne militaire sur le terrain a changé par le déploiement de forces russes d'interposition dès le 11 novembre 2020.

L'empire russe d'aujourd'hui, qui, dès le début du 19e siècle, cherchait déjà au Caucase sa route vers l'Océan indien et la Méditerranée, a peut-être trouvé là une occasion de laver l'humiliation de la chute de l'URSS en faisant un retour en force.

QUELQUES MOTS D'HISTOIRE

L'Artsakh tire son nom d'une province arménienne attestée, entre autres, par la présence, dans la région d'Agdam, des ruines archéologiques de Tigranakert, une des capitales de Tigran II dit le Grand (1er siècle avant J.-C.). Nul ne sait aujourd'hui, après la guerre de fin 2020, ce qu'il est advenu des fouilles entreprises sur le site, la destruction pure et simple étant l'hypothèse la plus probable.

On trouve aussi la référence du nom de l'Artsakh chez plusieurs auteurs de l'antiquité, qu'il s'agisse

Ադդամի շրջանում և մոտ է եղել Տիգրանակերտի հնէագիտական ավերակներին: 2020 թվականի վերջում տեղի ունեցած պատերազմից հետո ոչ ոք այսօր չգիտի, թե ինչ է կատարվել այնտեղ իրականացված պեղումների հետ: Ամենահավանական վարկածը բացահայտ ոչնչացումն է:

Արցախ անվան հիշատակումը կանաւ անտիկ շրջանի բազմաթիվ հեղինակների մոտ (հիշատակվել է աշխարհագրագետ Ստրաբոնի, Պլուտարքոսի, Նաս Դիոն Կասսիուսի կողմից): Ավելի ուշ (մեր թվարկության 4-րդ դարից սկսած) այս շրջանը նույնպես հայկական էր համարվում: 9-ից 13-րդ դարերում այն նախ եղել է Բագրատունիների հայկական թագավորության նահանգը, այնուհետև Զաքարյանների իշխանության ներքո է գտնվել:

Այս ամբողջ ժամանակաշրջանում ոչ ոք չգիտեր ո՛չ ադրբեջանցիների, ո՛չ էլ Ադրբեջանի մասին մի պարզ պատճառով, որ ապագա զավթիչներն այդ ժամանակ դեռևս հովիվներ էին Կասպից ծովի արևելքում, նույնիսկ ավելի հեռվում՝ Կենտրոնական Ասիայում:

17-րդ դարում հայ ազնվականները՝ մելիքները, որ ինքնավարություն էին վայելում պարսից Շահ Աբաս 1-ինի օրոք, իշխանության են գալիս, և դա տևում է մինչև 18-րդ դար: Իրականում Արցախի հիմնական առանձնահատկությունն ապաստարան լինելն էր, որը ժամանակին գործնականում անանցանելի էր:

19-րդ դարի սկզբին Եվրոպայում տիրող անհավասարակշռությունից օգտվելով (որը ստեղծվել էր նապոլեոնյան պատերազմների հետևանքով)՝ Ռուսական կայսրությունը հարձակվում է Պարսկական կայսրության վրա և գրավում Կովկասը, հետևաբար՝ նաև Արցախը:

ՍՏԱԼԻՆԻ ՄԵՂՔՈՎ

1921 թվականի հուլիսին՝ Կովկասի խորհրդայնացումից կարճ ժամանակ անց, Մոսկվայի կենտրոնական իշխանության հրամանագրով (որը Ստալինի ծրագիրն էր) Արցախը միացվում է Ադրբեջանին: 1923 թվականին այն ստանում է ինքնավար մարզի կարգավիճակ:

Ադրբեջանի կողմից արցախահայերի հպատակեցման այս անընդունելի իրավիճակը խորհրդային իշխանության օրոք շարունակվում է մինչև 1988 թվականը, երբ քաղաքական իրադարձությունները մուտք են գործում անկումային վիճակում գտնվող ԽՍՀՄ:

1988 թվականի փետրվարի 20-ին Ղարաբաղի ինքնավար Մարզի խորհրդարանը քվեարկում է Հայաստանին միանալու օգտին: Փետրվարի 26-ին մոտ մեկ միլիոն մարդ ցույց է անում Երևանում՝ Խորհրդային Միության գլխավոր իշխանությունից պահանջելով Արցախը միացնել Հայաստանին:

ՊԵՏԱԿԱՆ ՈՂՋ ՀԱՄԱԿԱՐԳԸ՝

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Հայկական հարցը, այդ պահից սկսած Ադրբեջանի պետական ապարատի կողմից արժանանում

du géographe Strabon, de Plutarque ou de Dion Cassius. Cette région est plus tard également attestée comme arménienne depuis le 4e siècle de notre ère. Entre les 9e et 13e siècles, elle sera, tour à tour, une province du royaume arménien des Bagratides et de la principauté des Zakarian.

À toutes ces époques, personne ne connaît ni Azéris ni Azerbaïdjan pour la bonne raison que les futurs envahisseurs sont encore bergers, à l'est de la Caspienne et même plus loin en Asie centrale!

Au 17e siècle, des nobles arméniens, les méliks, qui jouissent d'une autonomie sous le Shah d'Iran Abbas Ier, forment des principautés dont la puissance est observée jusqu'au 18e siècle. La principale caractéristique de l'Artsakh, en effet, est d'être un refuge, à l'époque, pratiquement inexpugnable.

Au début du 19e siècle, profitant des déséquilibres provoqués en Europe par les guerres napoléoniennes, l'empire russe s'attaque à l'Empire perse et s'empare du Caucase et donc de l'Artsakh

PAR LA FAUTE DE STALINE

Plus près de nous, en juillet 1921, peu après la soviétisation du Caucase, l'Artsakh est rattaché autoritairement à l'Azerbaïdjan par le pouvoir central de Moscou, représenté par Staline lui-même! Il est ensuite doté du statut de région autonome en 1923.

Cette situation, contre nature, d'assujettissement des Arméniens de l'Artsakh par l'Azerbaïdjan va perdurer sous le régime soviétique jusqu'en 1988 lorsque les événements se précipitent dans l'URSS décadente.

Le 20 février 1988, le parlement de la région autonome du Karabagh vote pour son union avec l'Arménie. Le 26 février, près d'un million de personnes manifestent à Erevan pour demander au pouvoir central soviétique chancelant le rattachement de l'Artsakh à l'Arménie.

TOUT L'APPAREIL D'ÉTAT CONTRE LA POPULATION CIVILE

La question arménienne reçoit à partir de là un traitement militaire répressif à grande échelle de la part de l'appareil d'État de l'Azerbaïdjan, comme cela avait été le cas dans l'empire ottoman. Les responsables azéris lancent, sur tout le territoire dépendant de leur autorité, une opération de répression spéciale. Elle se traduit par un nettoyage ethnique.

Dès le 27 février, pendant trois jours durant lesquels le pouvoir central soviétique à Moscou ne bouge pas, Soumgaït, ville pétrolière, Bakou, la capitale et Kirovabad (l'actuelle Gandja), deuxième ville du pays, sont le théâtre d'un déchaînement de haine contre la communauté arménienne cette fois de tout l'Azerbaïdjan. Il

Էլ լայնամասշտաբ ռազմական ճնշումների, ինչպես Օսմանյան կայսրության օրոք է եղել: Իրենց իշխանության ներքո գտնվող տարածքներում ադրբեջանցիները հատուկ պատժիչ գործողություններ են իրականացնում, որոնք հանգեցնում են էթնիկ զտման:

Փետրվարի 27-ից սկսած՝ խորհրդային կենտրոնական իշխանությունը երեք օր շարունակ Մոսկվայում ոչ մի քայլ ձեռնարկում: Նավթարդյունաբերական քաղաք Սումգայիթը, մայրաքաղաք Բաքուն և երկրի երկրորդ քաղաք Կիրովաբադն (այժմ՝ Գյանջա) ամբողջ Ադրբեջանով մեկ հայկական համայնքի դեմ ատելության քարոզի թատերաբեմ են դառնում:

Արցախում հայ բնակչության մեջ շարունակվում է հասունանալ ազգային ինքնավարության գաղափարը՝ չնայած հակառակորդի ճնշումներին: Երեք տարի անց, 1991 թվականի դեկտեմբերի 10-ի հանրաքվեով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումը հաստատվում է: Այդ օրերին սույն քայլը համապատասխանում էր խորհրդային և միջազգային իրավունքին: Այսպիսով, տարածաշրջանում պետք է ձևավորվեին հավասար իրավունքներ ունեցող երկու պետություններ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը և Ադրբեջանի Հանրապետությունը:

Այս առումով պետք է հիշել ժամանակի համատեքստը: Խորհրդային կայսրությունը փլուզման եզրին էր: Քաղաքական և տնտեսական կառուցվածքային դժվարությունների ճնշման ներքո Գորբաչովը փորձում էր փրկել վարչակարգը մի շարք բարեփոխումների միջոցով (այն հայտնի է պերեստրոյկա անվամբ), որոնց նախաձեռնությունը սկսել է 1985 թվականին՝ իր իշխանության գալուց անմիջապես հետո: Պերեստրոյկան (վերակառուցումը) սահմանվում է որպես «թափանցիկության միջոցով ժողովրդավարացման փուլ» (գլաժնոստ):

6 ՏԱՐՎԱ ՍՈՂԱՑՈՂ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Արցախի և Ադրբեջանի միջև հակամարտությունը տևում է 1988-ից մինչև 1994 թվականները: Մի իրադարձություն ինքնին հեղաշրջում է իրավիճակը: 1992 թվականի մայիսի 8-ին հայերը անակընկալ կերպով ազատագրում են Շուշին: Ադրբեջանական ուժերն այդտեղից անդադար ռմբակոծում էին մայրաքաղաք Ստեփանակերտը:

Բնական է, որ հետագայում անվտանգության գոտի ստեղծելու նպատակով հայերն իրենց վերահսկողության տակ են վերցնելու շրջակա տարածքները, հատկապես՝ Քարվաճառի շրջանը, որն ազատագրեցին 1993 թվականի ապրիլին Մոնթե Մելքոնյանի հրամանատարությամբ: Հետագայում նրան շնորհեցին Հայաստանի ազգային հերոսի բարձրագույն կոչումը: Դեռ երկու տարի էլ կպահանջվեր, որպեսզի 1994 թվականի մայիսին կնքվեր հրադադարի պայմանագիրը:

1997 թվականից Ֆրանսիան, Ռուսաստանը և Միացյալ Նահանգները ԵԱՀԿ-ի (Եվրոպայում

en résulte une trentaine de morts et deux mille blessés.

Mais malgré l'adversité, l'idée d'autodétermination continuera de mûrir dans la population arménienne de l'Artsakh et, trois ans après, par référendum, le 10 décembre 1991, la proclamation de la République du Haut-Karabagh est entérinée. Cette étape est, à l'époque, conforme au droit soviétique et au droit international. Ainsi auraient du se former dans la région deux états égaux en droit, la République du Haut-Karabagh et la République d'Azerbaïdjan.

Il nous semble ici à propos de rappeler le contexte de l'époque. L'empire soviétique est à bout de souffle. Sous la pression de difficultés économiques et politiques structurelles, Gorbatchev tente de sauver le régime par un train de réformes initié dès son accession au pouvoir en 1985 et connu sous le nom de perestroïka. On définit alors cette perestroïka (reconstruction) comme une étape de « démocratisation par la transparence (glasnost). »

SIX ANS DE CONFLIT LARVÉ

Le conflit entre l'Azerbaïdjan et l'Artsakh va donc durer de 1988 à 1994. À lui seul, un événement va faire basculer la situation. Les Arméniens prennent en effet par surprise la ville de Chouchi, le 8 mai 1992 car, de là, les forces azéries ne cessaient de bombarder Stepanakert, la capitale.

Et c'est ensuite naturellement, pour créer une zone de sécurité, que les Arméniens prendront le contrôle des régions avoisinantes, notamment celle de Karvachar prise en avril 1993 sous la direction de Monte Melkonian qui sera fait héros national de l'Arménie. Mais il faudra encore deux ans pour qu'un accord de cessez-le-feu intervienne en mai 1994.

Depuis 1997, la France, la Russie et les États-Unis, se sont vus mandatés pour assurer la médiation du conflit par l'OSCE, organisation dite de dialogue et de prévention sur les questions de sécurité internationale. Cette médiation, connue sous le nom de « Groupe de Minsk » n'a pas donné de résultat tangible.

Trente ans se sont donc pratiquement passés pendant lesquels il apparaît que l'Azerbaïdjan s'est armé jusqu'aux dents grâce à une coopération militaire accrue avec la Turquie notamment depuis 2010.

L'ENNEMI N'ÉPARGNE NI CIVILS, NI HÔPITAUX, NI MATERNITÉS

Et le 27 septembre dernier, avec, de plus, le concours de plusieurs milliers de mercenaires djihadistes transportés depuis la Syrie, l'Artsakh a délibérément été agressé, l'offensive n'épargnant aucune zone civile.

Pendant six semaines, la population civile a été écrasée sous toutes sortes d'armes interdites par les

անվտանգության և համագործակցության կազմակերպություն, որը զբաղվում է միջազգային անվտանգության հարցերի շուրջ երկխոսության հաստատմամբ և խնդիրների կանխարգելմամբ) կողմից հակամարտությանը միջնորդելու մանդատ ստացան: «Մինսկի խումբ» անունով հայտնի այս միջնորդությունը շոշափելի որևէ արդյունք չտվեց:

30 տարի է արդեն անցել, այդ ընթացքում Ադրբեյջանը մինչև ատամները զինվել է՝ հատկապես 2010 թվականից հետո Թուրքիայի հետ ունեցած ռազմական համագործակցության ընդլայնման շնորհիվ:

ԹՇՆԱՄԻՆ ՉԻ ԽՆԱՅՈՒՄ Ո՛Չ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ, Ո՛Չ ՀԻՎԱՆԴԱՆՈՑՆԵՐԸ, Ո՛Չ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԸ

Սեպտեմբերի 27-ին Սիրիայից տեղափոխված մի քանի հազար ջիհադիստական վարձկանների օգնությամբ Արցախի վրա կանխամտածված հարձակում սկսվեց, որի հետևանքով չխնայվեց քաղաքացիական որևէ բնակավայր:

Վեց շաբաթ շարունակ քաղաքացիական բնակչությունը տուժեց միջազգային համաձայնագրերով արգելված տարատեսակ զինամթերքի օգտագործման հետևանքով, իսկ կլաստերային և ֆոսֆորային ռումբերը (որոնցից մի քանիսը իսրայելական արտադրության են) անդառնալիորեն վնասել են էկոհամակարգը: Գի Տեսիեի (պատգամավոր, Արտաքին գործերի հանձնաժողովի անդամ և Ֆրանսիա-Արցախ բարեկամության շրջանակի նախագահ) գլխավորած ֆրանսիացի 80 խորհրդարանականներից բաղկացած պատվիրակությունը հանդես եկավ հետևյալ հայտարարությամբ.

«Մի կողմից ունենք Հայաստան և Արցախ, որոնք իրավունքի գերակայությամբ կառուցել են պետություններ և կոչ են անում հակամարտությանը լուծում տալ բանակցային ճանապարհով, մյուս կողմից՝ Ադրբեյջանի բռնապետությունը, որը հաղթանակը պատկերացնում է միայն Արցախի և Հայաստանի հայերի ամբողջական և վերջնական բնաջնջմամբ: Մենք պետք է որոշում կայացնենք, քանի որ արդարությունը կողմնորոշում է պահանջում: Չարտահայտվելը ագրեսորի հետ համաձայնվել է՝ նշանակում»:

Պատերազմն ավարտվեց 2020 թվականի նոյեմբերի 10-ին հայերի պարտությամբ: Ըստ որոշ աղբյուրների՝ մարդկային կյանքերի կորուստը ավելի քան 4000 է, վիրավորների թիվը՝ 10,000-ից շատ, իսկ Եվրոպայում որոշ խորհրդարանների՝ Արցախի Հանրապետության ճանաչմանն ուղղված ուշացած որոշումը չնչին մխիթարանք է:

ԲՆԱԶՆՋՄԱՆ ԻՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Հայերին այսօր, ինչպես մեկ դար առաջ, բնաջնջում է սպառնում, քանի որ Թուրքիայի զավթողականության ճանապարհին են գտնվում:

conventions internationales comme des bombes à fragmentation et des bombes au phosphore, dont certaines de fabrication israélienne, qui ont irréversiblement endommagé l'écosystème.

Guy Tessier, député, membre de la Commission des Affaires Etrangères, président du Cercle d'Amitié France-Artsakh, un groupe de 80 parlementaires français a déclaré:

«Vous avez d'un côté l'Arménie et l'Artsakh qui ont bâti des Etats de droit et qui appellent à une solution négociée au conflit, et de l'autre la dictature d'Azerbaïdjan qui n'envisage comme victoire que l'éradication totale et définitive des Arméniens d'Artsakh et d'Arménie. On doit prendre parti car la justice prend parti. Ne pas prendre parti, c'est prendre parti pour l'agresseur.»

La guerre a pris fin le 10 novembre 2020 par la défaite des Arméniens. Selon certaines sources, les pertes en vies humaines sont de plus de 4000 personnes, le nombre de blessés serait de plus de 10 000 et les résolutions tardives de certains parlements en Europe pour la reconnaissance de l'État d'Artsakh apparaissent comme une bien maigre consolation.

UN VÉRITABLE TRAVAIL D'ÉRADICATION

Les Arméniens sont aujourd'hui, comme il y a un siècle, menacés d'extermination, car ils se trouvent en travers de la route de l'expansionnisme turc.

On voit bien, sur le terrain en Artsakh, que l'alliance entre la Turquie et l'Azerbaïdjan n'agit pas seulement pour contrôler un territoire en invoquant un improbable droit de propriété. Il s'agit avant tout, comme l'a déclaré sans équivoque le président turc lui-même, de «finir le travail commencé en 1915». En clair, d'opérer la jonction de la Turquie avec l'Azerbaïdjan en éliminant les Arméniens d'Artsakh.

La menace ne porte pas seulement sur les personnes physiques. Tout ce qui rappelle la présence des Arméniens chrétiens dans cette région doit être effacé d'une façon ou d'une autre.

Un véritable travail d'éradication des monuments a commencé depuis la fin des hostilités en Artsakh, occupé aux deux tiers aujourd'hui par les forces azéries. Ou bien on détruit, ou bien on efface toute inscription, car le souvenir même de l'existence arménienne doit disparaître.

UNE SPÉCIALITÉ REMARQUABLE: LA DESTRUCTION DE CIMETIÈRES

À titre d'exemple d'exaction planifiée, de 1998 à 2005, au Nakhitchévan 1 3000 khatchkars, stèles funéraires sculptées, pour certaines datant de la fin du 16e, ont été cassées au bulldozer dans le cimetière de Djoulfa.

Արցախի իրավիճակի ականատեսը լինելով՝ հասկանում ենք, որ Թուրքիայի և Ադրբեջանի միջև կնքված դաշինքը միայն նրա համար չէ, որ որևէ տարածք վերահսկվի սեփականության բացարձակ իրավունքով: Այն առաջին հերթին վերաբերում է (ինչպես աներկբայորեն հայտարարել է հենց ինքը՝ Թուրքիայի նախագահը) 1915 թվականին սկսած գործը ավարտին հասցնելուն, ավելի պարզ՝ Թուրքիան միավորել Ադրբեջանին՝ ընաճնջելով Արցախի հայերին:

Սպառնալիքը միայն ֆիզիկական անձանց չի վերաբերում: Այն, ինչ հիշեցնում է այս տարածաշրջանում քրիստոնյա հայերի ներկայությունը, պետք է այս կամ այն կերպ ընաճնջվի:

Հուշարձանների վերացման իրական գործընթացն Արցախում (որի երկու երրորդն այսօր օկուպացված է ադրբեջանական ուժերի կողմից) սկսվեց այն ժամանակվանից, երբ զինված հարձակումներն ավարտվեցին: Կամ ոչնչացնում են, կամ ջնջում ամեն տեսակ արձանագրություն, քանի որ հայերի գոյության մասին հիշողությունն անգամ պետք է անհետանա:

ՈՒՇԱԳՐԱՎ ՎԱՐՔԱԳԻԾ. ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ՈՉՆՁԱՑՈՒՄԸ

Ծրագրած անիրավության օրինակ է 1998-2005 թթ. Նախիջևանում 13,000 խաչքարերի, Զուլֆայի գերեզմանատան փորագրված շիրիմների (որոշները թվագրվում են 16-րդ դարի վերջ) բուլդոզերով քանդելը:

Իսկ 2021 թ. մայիսի 5-ին արբանյակային պատկերների միջոցով տեղեկացանք, որ այս գրքում հիշատակված Մեծ Թաղերի (Հադրութի շրջանի գյուղ) գերեզմանատունն ամբողջությամբ ավերված է: Նրա եկեղեցին նույնպես վտանգված է այնպես, ինչպես Շուշիի մայր տաճարը, որի գմբեթն արդեն ավերված է:

Վերոնշյալ բոլոր անիրավությունները ցույց են տալիս, որ Թուրքիայի և Ադրբեջանի այսօրվա դաշինքն իրապես պանթուրքիզմի դրսևորում է: 19-րդ դարի վերջին ի հայտ եկած այս գաղափարախոսությունը հավակնում է միավորել թյուրքախոս ժողովուրդներին և վերակառուցել Օսմանյան կայսրությունից նույնիսկ ավելի մեծ պետություն:

Հաջորդիվ տեքստում պատմողն այս պատերազմին մասնակցած լուսանկարիչ Դեմիր Սյունեզն է, որ եղել է Իրաքում և Ռոջավայում (Արևմտյան Քուրդիստան, Հյուսիսային Սիրիա): Գրքում նա մի զարմանահրաշ պատմություն է պատմում: Իր լուսանկարների և գրավոր տեքստի միջոցով պատմում է 44-օրյա պատերազմի ընթացքում Արցախում ապրած օրերի մասին: Նա ականատեսի աչքով մանրամասնորեն ներկայացնում է վկայություններ մարտերի մասին: Գրքում խոսում է նաև մայրաքաղաք Երևանում ունեցած իր անսպասելի հանդիպումների մասին:

Et on a appris le 5 mai 2021, par des images satellite, que le cimetière de Mets Tagher, village de la région de Hadrout en Artsakh, évoqué dans le présent ouvrage, a été entièrement rasé au bulldozer. Son église est également menacée comme est menacée la cathédrale de Chouchi dont le dôme vient d’être supprimé.

Toutes les exactions dénoncées ci-dessus montrent que l’alliance d’aujourd’hui entre la Turquie et l’Azerbaïdjan est bien l’expression du panturquisme. Cette idéologie, apparue en fin du 19e siècle, prétend relier les peuples turcophones et reconstituer un état plus vaste encore que l’Empire ottoman.

Or, l’Artsakh et l’Arménie se trouvent en travers de la route du panturquisme. Par conséquent, l’élimination de ces deux États arméniens est évidemment au programme du régime turc actuel qui s’entête à nier le génocide de 1915.

Dans le récit qui suit, Demir Sönmez, photographe de guerre expérimenté, qui s’est trouvé en Irak et au Rojava (Kurdistan occidental, Nord de la Syrie) rapporte dans un récit saisissant, à travers ses photos et par l’écrit, les jours qu’il a vécus en Artsakh au cours même de cette guerre de 44 jours, il rapporte dans le détail tout ce qu’il a observé sur le terrain pendant les combats et aussi ses rencontres inattendues dans la capitale arménienne, Erevan.

1 Նախիջևանը (ինչպես Արցախը) պատմականորեն հայկական տարածք է, որը գտնվում է Ներկայիս Հայաստանի և Պարսկաստանի միջև: 1921 թ. այն նույնպես կամայականորեն միացվեց Ադրբեջանին: Այսօր այն Բաքվի վերահսկողության տակ է, բայց միաժամանակ ցանկալի տարածք է Թուրքիայի համար: Այն պահպանել է իր հայկական անունը (բառացի նշանակում է «իջնելու վայր»), որը պայմանավորված է տապանից դուրս եկող Նոյի պատմական քայլով, նա, ըստ ավանդության, պետք է կառուցեր մի նոր աշխարհ և առաջինը խաղողի որջ տնկեր:

1 Le Nakhitchevan, tout comme l’Artsakh, est un territoire historiquement arménien, situé entre l’Arménie actuelle et l’Iran. Il a, lui aussi été rattaché à l’Azerbaïdjan de façon arbitraire, en 1921. Aujourd’hui sous le contrôle de Bakou, il est convoité par la Turquie. Il a gardé son nom arménien qui signifie littéralement «l’endroit de la descente», en référence à la marche de Noé sortant de l’Arche pour, selon la tradition, construire un monde nouveau et notamment planter la vigne.

Հայ ժողովուրդը 2020 թվականի սեպտեմբերի 27-ին հայտնվեց ցեղասպանական հարձակումների թիրախում: Իսկ աշխարհը նպատակահարմար գտավ լռել այն պատերազմի դեմ, որը սկսվեց Ադրբեյջանի և ջիհադիստական խմբավորումների կողմից, որոնք Սիրիայում և Թուրքիայում պահվել են վերջինիս հովանավորությամբ:

Տնտեսական, գինվորական և տեխնիկական գերիզորայն տերության ցեղասպանության փորձին (որը դիվանագիտական աջակցություն է ստացել միջազգային կազմակերպությունների և ինստիտուտների կողմից) Հայաստանի և Արցախի (Լեռնային Ղարաբաղի) ժողովուրդը 44 օր հերոսաբար դիմակայեց: Այս պատերազմի ընթացքում Հայաստանի և Արցախի ժողովուրդը կռվել է ոչ միայն ադրբեյջանական, թուրքական և ջիհադիստական խմբավորումների, այլև ՆԱՏՕ-ի երկրորդ ռազմական ուժի հարձակումների դեմ (որն ուներ ՆԱՏՕ-ի աջակցությունը և օգտվում էր վերջինիս ռազմական ամբողջ տեխնիկայից): Այս պատերազմը հայերին և եզդիներին՝ Մերձավոր Արևելքի, Միջագետքի և Կովկասի հին ժողովուրդներին, բնաջնջելու նոր փորձ էր:

Մարդկության պատմությունը սկզբնավորվել է այս երկու ժողովուրդների հողերի վրա: Այսօր այդ տարածքներում ապրողները լավ գիտեն այդ մասին: Այս պատերազմը ցեղասպան ոճրագործության շարունակությունն էր, որը դարեր շարունակ իրագործվել է այս երկու ժողովուրդների դեմ: Արցախում և Հայաստանում չկա մշակութային

Le 27 septembre 2020, le peuple arménien est redevenu la cible d'attaques génocidaires. Le monde est resté pratiquement silencieux face à cette guerre lancée par l'Azerbaïdjan et une avant-garde de djihadistes que la République de Turquie avait nourris en Turquie et en Syrie.

Face à la supériorité économique, militaire et technologique d'une puissance soutenue diplomatiquement par les institutions et organisations internationales, le peuple d'Arménie et d'Artsakh (Haut-Karabagh) a héroïquement résisté pendant 44 jours à cette tentative de génocide.

Durant cette guerre, le peuple d'Arménie et d'Artsakh s'est battu non seulement contre des organisations azéries, turques et djihadistes, mais aussi contre les attaques de la deuxième puissance militaire de l'OTAN, qui a accès à tous ses équipements militaires en bénéficiant de son soutien.

Cette une nouvelle tentative d'anéantir les Arméniens et les Yézidis, peuples anciens du Moyen-Orient, de la Mésopotamie et du Caucase. L'histoire humaine est née sur ces terres avec ces deux peuples, ceux qui occupent ces terres aujourd'hui le savent très bien. Ils ont continué à commettre le crime de génocide perpétré contre ces peuples pendant des siècles.

En particulier en Artsakh et en Arménie, on ne trouve pas un seul morceau de pierre ou

- Արարատ լեռ:
25.10.2025
- Le Mont Ararat.
25.10.2025
- ↘ Թուրք-ադրբեջանական
ռազմական ուժերի
ռմբակոծած
ռազմական գոտի՝
Լեռնային Ղարաբաղի
մայրաքաղաք
Ստեփանակերտում:
26.10.2020
- ↘ Une zone militaire
bombardée par les forces
militaires azérbéjanaises
et turques à Stepanakert,
capitale du Haut-Karabakh.
26.10.2020





որևէ կոթող կամ քարի մի կտոր, որը կփաստի ադրբեջանցիների և թուրքերի պատմական արմատների գոյության մասին՝ լինի վերոնշյալ տարածքների ընդերքում, թե երկրի մակերևույթին:

Այսօրվա Թուրքիային պատկանող տարածքում, ընդհակառակը, ամենուր կարելի է գտնել բազմաթիվ փաստացի հետքեր, որ հազարամյակներ շարունակ այստեղ ապրել են ոչ միայն հայերը, այլև քրդերը, եզդիները, ասորիները, հույները և այլ ժողովուրդներ:

Թուրքերը շատ ուշ են հաստատվել այս տարածքներում: Նրանք, զբաղեցնելով այս հողերը, ամեն կերպ փորձել են ոչնչացնել հալածված այս հին ժողովուրդներին: 2020 թվականին սկսված պատերազմը այս քաղաքականության շարունակությունն է:

Երբ սկսվեցին Հայաստան և Արցախների սուղ հարձակումները, եմ որպես ֆոտոլրագրող, լրագրող, Շվեյցարիայի քաղաքացի, նաև արմատներով հայ և քուրդ, չէի կարող անտարբեր լուռ մնալ այս իրադարձությունների հանդեպ: Ուզում էի վկան լինել այն ամենի, ինչ կատարվում էր, աշխարհին լսելի դարձնել հալածված մարդկանց ձայնը, աղաղակները, կիսել նրանց ցավը և պատմական ակնարկ կազմել՝ փաստելով այդ իրադարձությունների իսկությունը:

Անելիքներ կային նաև Եվրոպայում, Շվեյցարիայում և Սփյուռքում, բայց դա բավարար չէր ինձ համար: Գիտակցելով, որ այն, ինչ կարող էի անել Հայաստանից դուրս, սահմանափակ էր, ցանկություն ունեցա մեկնել ճակատ հայերի ձայնն ավելի լսելի դարձնելու:

Հայաստան և Արցախ ճանապարհորդությունս սկսվեց հոկտեմբերի 22-ին՝ շնորհիվ ընկերներիս կողմից ցուցաբերած բարոյական և ֆինանսական աջակցության, քանի որ այդ ընթացքում կորոնավիրուսային համաճարակի խստագույն սահմանափակումներն էին մեկնարկել: Մեկնեցի՝ առանց հաշվի առնելու տնտեսական, սոցիալական և առողջական այն խնդիրները, որ կարող էին լինել:

Օդանավը հոկտեմբերի 23-ի առավոտյան ժամանեց Երևանի «Զվարթնոց» միջազգային օդանավակայան: Առաջին անգամ այս օդանավակայան ժամանել էի 2015 թ. (Ցեղասպանության 100-րդ տարելիցի առթիվ) հայ-շվեյցարական խորհրդարանական խմբի ընկերների հետ: Հայաստան եկել եմ նաև այլ առիթներով:

Եղբայրական ընկերս՝ վաստակավոր լրագրող Րաֆֆի Հերմոն Արաքսը (հայ դիվանագիտական հիմնադրամի «Փորձագետների կոմիտեի» անդամ է) ինձ դիմավորում է օդանավակայանում: Հնարավոր չէ նրա մարդկային տեսակն այստեղ նկարագրել, բայց եթե ամփոփեի նրա էությունը մեկ նախադասությամբ, կասեի. «Նա Սփյուռքի և Հայաստանի մեծ զավակն է, դիվանագիտության և

un quelconque artefact attestant des racines historiques des Azéris ou des Turcs, que ce soit sous terre ou à la surface de la terre. En revanche, nous trouvons aujourd’hui des milliers de traces prouvant que non seulement les Arméniens, mais aussi les Kurdes, les Assyriens, les Grecs, les Yézidis et d’autres peuples ont vécu pendant des millénaires sur chaque pied du sol turc.

Les Turcs sont arrivés plus tard, occupant ces terres tout en essayant de détruire ces anciens peuples opprimés. La guerre lancée en septembre 2020 est une continuation de cette politique.

Lorsque les attaques envahissant l’Artsakh et l’Arménie ont commencé, je ne pouvais pas rester indifférent et silencieux, en tant que reporter photographe, journaliste, et surtout, en tant que citoyen suisse aux racines arméniennes et kurdes.

Je voulais être témoin de ce qui se passait, faire entendre dans le monde les voix et les cris des personnes opprimées, partager leur douleur et documenter les événements pour en faire un document historique.

Il y avait aussi des choses à faire en Europe, en Suisse et dans la diaspora, mais cela ne me suffisait pas. Comme j’étais conscient que ce que je pouvais faire ici était limité, j’ai voulu aller au front pour amplifier la voix du peuple arménien.

Alors que l’épidémie de Coronavirus a déclenché des conditions restrictives les plus sévères, j’ai commencé mon voyage en Arménie puis en Artsakh le 22 octobre, grâce au soutien économique et moral apporté par mes amis, quelle que soit les difficultés sociales, économiques et sanitaires pour moi.

J’atterris à l’aéroport international de Zvartnots à Erevan dans la matinée du 23 octobre; j’étais venu ici pour la première fois en 2015 avec le groupe d’amitié parlementaire Suisse-Arménie à l’occasion du centenaire du génocide, ensuite pour diverses raisons.

Mon ami fraternel, Raffi Hermon Araks, membre du «Comité d’experts» de la Fondation pour la diplomatie arménienne et journaliste de carrière, m’accueille à l’aéroport. Il n’est pas possible de le décrire ici, mais si je devais résumer son essence en une phrase, «il est le gentleman de la diaspora et de l’Arménie, un envoyé de la paix et de la diplomatie grâce à ses caractéristiques sociales et culturelles, œuvrant pour son pays et son peuple».

En déchargeant mes bagages du taxi lorsque nous arrivons à l’hôtel, je me rend compte que j’ai accidentellement pris la valise rouge d’une autre

խաղաղության դեսպանորդը՝ իր սոցիալ-մշակութային առանձնահատուկ գործունեության շնորհիվ, մարդ, որ ինչպեստ հայ ժողովրդի և իր հայրենիքի է աշխատում»:

Հյուրանոց հասնելուն պես, երբ իջեցրի ճամպորուկներս տաքսիից, տեսա, որ պատահաբար վերցրել եմ մեկ ուրիշի կարմիր ճամպուրուկը: Ցընցվեցի, քանի որ ինձ մոտ չէին լուսանկարչական ապարատի լիցքավորիչներն ու ոսպնյակները: Վերադառնում ենք օդանավակայան և գտնում ճամպուրուկ: Ներողություն եմ խնդրում ճամպուրուկի տիրոջից՝ սխալմամբ նրա ճամպուրուկը վերցնելու, նաև անախորժության համար: Երբ վերադարձանք հյուրանոց, արևն արդեն ծագում էր:

Մի քանի ժամ հանգստանալուց հետո գնում ենք Բաֆֆիի տուն, այնտեղ մշակում բոլոր այն ծրագրերը, որոնք անմիջապես պետք է կատարենք: Հետո գնում ենք ՀՀ արտաքին գործերի նախարարություն: Մուտքի մոտ մեզ մի երիտասարդ է ժպտով դիմավորում: Նախարարությունում իմ ազգանունով մամուլի ժամանակավոր քարտ են հատկացնում (որը վավեր է Հայաստանի սահմաններում): Այնուհետև գնում ենք Երևանում գտնվող Արցախի ներկայացուցչության գրասենյակ՝ Արցախ գնալու համար վիզա ստանալու դիմումի և մամուլի ժամանակավոր քարտի համար: Հանձնում եմ COVID-19-ի թեստ: Հաջորդ օրվա համար հանդիպման ժամ ենք ամրագրում գրասենյակում և վերադառնում հյուրանոց:

Արցախի ներկայացուցչության գրասենյակ գնում ենք վաղ առավոտյան: Աշխատակիցը մեզ սպասարահ է ուղեկցում և գնում: Որոշ ժամանականց ծառայողների տարօրինակ պահվածքն արժանանում է իմ ուշադրությանը:

— Խնդիր ունենք, — ասացի Բաֆֆիին:

Այդ ընթացքում կանգնեցնում ենք անցնող ծառայողներից մեկին և ասում, որ եկել ենք վիզա և մամուլի քարտ ստանալու, բայց երկար ժամանակ է, ինչ սպասեցնում են մեզ: Հավելում ենք նաև, որ մեր հանդեպ վերաբերմունքի փոփոխություն ենք նկատում: Պաշտոնատար անձը պատասխանում է՝ Դեմիր Սյունեզը թուրքական անուն-ազգանուն է: Հետո ասում է, որ իրենք մի փոքր ավելի շատ ժամանակի կարիք ունեն՝ որոշում կայացնելու համար:

— Համբերե՛ք, Ձեզ տեղյակ կպահենք, — ասում է նա և հեռանում:

Պատերազմական իրավիճակում տարօրինակ թվաց իմ թուրքական ազգանունը: Գնում ենք Արտաքին գործերի նախարարություն: Հայտնում են, որ տեղյակ են ստեղծված իրավիճակից և խոստանում են խնդիրը լուծել հնարավորության դեպքում՝ ներողություն խնդրելով ստեղծված անհարմարության համար:

Երբ վերադառնում ենք հյուրանոց, ես ու Բաֆֆին սկսում ենք կապ հաստատել մեր ծանոթների հետ՝ նրանց աջակցությունը ստանալու համար:

personne. Je suis en état de choc, car je n'ai pas les objectifs et les chargeurs de l'appareil photo. Nous retournons à l'aéroport et retrouvons ma valise: je m'excuse pour les désagrément causé au propriétaire de celle que j'avais emportée par erreur. Lorsque nous rentrons à l'hôtel, le soleil est sur le point de se lever.

Après nous être reposés quelques heures, nous allons chez Raffi, où nous élaborons des plans sur ce que nous devons faire tout de suite avant de nous rendre au ministère des Affaires étrangères d'Arménie. À l'entrée, un jeune homme nous accueille avec un sourire.

Là, je reçois une carte de presse temporaire délivrée à mon nom, valable dans les limites de l'Arménie, et nous assistons à un briefing. Ensuite, nous nous rendons au bureau de représentation de l'Artsakh à Erevan pour demander un visa pour nous rendre en Artsakh, ainsi qu'une carte de presse temporaire. Je passe un test Covid-19. Le rendez-vous étant pris pour le lendemain, nous retournons à l'hôtel.

Nous nous rendons au bureau de représentation tôt le matin; le préposé nous invite à prendre place dans la salle d'attente et s'en va. Après plusieurs heures, le comportement bizarre des fonctionnaires attire mon attention. «Il doit y avoir un problème», dis-je à Raffi. Entre-temps, nous interceptons un fonctionnaire qui passe et lui disons que nous sommes venus pour recevoir un visa et une carte de presse, mais qu'on nous a fait attendre très longtemps; de plus, nous constatons un changement d'attitude à notre égard. L'officier répond: «Demir Sönmez est un nom turc» et s'en va en ajoutant: «Nous avons besoin d'un peu plus de temps pour prendre une décision... Patientez, nous vous tiendrons au courant.»

Dans un environnement de guerre, mon nom de famille turc est trouvé bizarre.

Alors nous nous rendons au ministère des Affaires étrangères. On nous dit qu'ils sont au courant de l'évolution de la situation et, tout en s'excusant pour le désagrément, ils promettent que le problème sera résolu dès que possible.

De retour à l'hôtel, Raffi et moi commençons à appeler nos contacts pour obtenir leur soutien. Nous essayons de joindre tous ceux que nous pouvons afin d'expliquer notre problème. C'est la pagaille totale; tous les canaux diplomatiques sont activés, et cela perdure pendant deux jours. Finalement, les autorités nous appellent pour nous signifier: «Vos documents sont prêts, vous pouvez venir les chercher.» On nous accueille à l'entrée de la représentation d'Artsakh. Après s'être excusés pour le retard, ils me remettent les papiers en précisant qu'ils peuvent nous aider...